ԿԱՐԾԻՔ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Զավեն Շմավոնի Մկրտչյանի

«Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության զարգացման տնտեսա–էկոլոգիական հիմնախնդիրները» *թեմայով ատենախոսության վերաբերյալ*

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Թեև, ՀՀ կառավարությունը հանքարդյունաբերությունը գերակա ճյուղ չի համարում, սակայն այն շարունակում է ՀՀ տնտեսական համալիրի անբաժանելի մաս կազմել և մեծապես ազդել տնտեսական ակտիվության վրա: Մեծ են հանքագործական արդյունաբերության, մասնավորապես, պոլիմետալիբդենային խտանյութերի արտահանման ծավալները ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունում:

Հատկապես վերջին տարիներին նկատվող հանքագործական արդյունաբերության բուռն զարգացումը, առանձնապես մետաղային օգտակար հանածոների արդյունահանումը, իր հետ բերում է նաև անցանկալի հետևանքներ, որոնցից ամենակարևորը բնապահպանականն է:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման ու կենսագործման ընթացքում բնապահպանական բաղադրիչը որևէ կերպ չպետք է ստորադասվի, որովհետև կարճաժամկետ տնտեսական արդյունքները կարող են հանգեցնել լուրջ կորուստների երկարաժամկետ հատվածում:

Ինչպես ցույց է տալիս բազմաթիվ զարգացող երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության ընդերքօգտագործող ընկերությունների գործունեության տնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունը և արդյունքների վերլուծությունը, ներկայումս առկա են մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես բնապահպանական վերահսկողության օրենքներով սահմանված մեխանիզմները միշտ չէ, որ արդյունավետ կերպով ազդում են շրջակա միջավայրի բարելավման ուղղությամբ: Եվ որպես այս իրավիճակի հիմնական պատճառ կարելի է նշել շրջակա միջավայրի աղտոտման պատճառների վեր հանման, մշտադիտարկման, գնահատման և

կառավարման հետ կապված մեթոդաբանական հիմնախնդիրը, որոնց լուծման համար պահանջվում է գիտական հիմնավորվածություն ունեցող մեխանիզմների մշակում: Այս ամենով է պայմանավորված քննարկվող ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է իրականացնել Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության հումքային բազայի օգտագործման և տնտեսա-էկոլոգիական գործիքակազմի ուսումնասիրություն, գնահատել մետաղական հանքավայրերի ընդերքօգտագործման հիմնախնդիրները և բացահայտել ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ հիմնախնդիրները՝

- ուսումնասիրել հանքային ռենտայի տնտեսագիտական բովանդակությունը և դրա գնահատման միջազգային ցուցանիշները,
- բացահայտել հանքագործական արդյունաբերության ներդրումային գրավչության վրա ազդող գործոնները,
- գնահատել հանքագործական արդյունաբերության էկոլոգիական և սոցիալական ազդեցությունները ու դրանց կարգավորման տնտեսական կառուցակարգերը,
- ուսումնասիրել հանքագործական արդյունաբերության զարգացման հումքային բազան և օգտագործման վիճակը,
- ուսումնասիրել ՀՀ հանքագործական արդյունաբերության զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխման միտումները,
- գնահատել Հայաստանի Հանրապետությունում հանքագործական արդյունաբերության զարգացման սոցիալական ու էկոլոգիական ռիսկերը,
- ուսումնասիրել հանքարդյունաբերության ոլորտում բնական ռեսուրսների օգտագործման համար ռոյալթիների կամ վճարների հաշվարկման մեթոդաբանությունը,
- ներկայացնել Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռենտայի ձևավորումը և դրա հաշվարկը,

- մշակել հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռեսուրսի ձևավորման և հարկազանձման բարելավման ուղիները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջին՝ **«Հանքարդյունաբերության (հանքագործական արդյունաբերության) տնտեսա–էկոլոգիական հիմնահարցերը և զարգացման ժամանակակից միտումները»** գլխում ուսումնասիրվել են հանքային ռեսուրսի սահմանման և գնահատման մեթոդաբանության, հանքագործական արդյունաբերության ներդրումային գրավչության հիմնախնդիրները, հանքային ռեսուրսի միջազգային ցուցանիշները, ինչպես նաև այդ ցուցանիշների դրսևորման առանձնահատկությունները տարբեր երկրներում: Ատենախոսության այս գլխում դիտարկվել են հանքագործական արդյունաբերության էկոլոգիական և սոցիալական ազդեցություններն ու դրանց կարգավորման տնտեսական կառուցակարգերը և մասնավորապես, քաղաքականության մեջ լայնորեն կիրառվող լուծումները:

Ատենախոսության երկրորդ **«Հանքագործական արդյունաբերության զարգացման արդի տնտեսա-էկոլոգիական առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում ներկայացվել են հանքագործական արդյունաբերության զարգացման հումքային բազան և բնութագրվել է դրա օգտագործման վիճակը, վերլուծվել են ՀՀ–ում հանքագործական արդյունաբերության զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշները, ընդերքօգտագործման ոլորտում հարկազանձման ընդունված պրակտիկան: Հեղինակն ուսումնասիրել է նաև ՀՀ–ում ընդերքօգտագործման և հանքագործական արդյունաբերության զարգացման սոցիալական ու էկոլոգիական ռիսկերը:

Ատենախոսության երրորդ՝ **«Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության ոլորտի հանքային ռեսուրսի ձևավորման և բաշխման բարելավման հիմնական ուղիները»** գլխում ներկայացվել են հանքագործական արդյունաբերության ոլորտում բնական ռեսուրսների օգտագործման համար ռոյալթիների կամ վճարների հաշվարկման մեթոդաբանությունը, ՀՀ հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռեսուրսի ձևավորումը և դրա մեծության հաշվարկը, ինչպես նաև առաջարկվել են այդ ոլորտում հանքային ռեսուրսի ձևավորման և հարկագանձման բարելավման ուղիները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Հետազոտության արդյունքում ստացվել են գիտա-գործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

1. Վիճարկվել է այն տարածված տեսակետը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը աղքատ է հանքահումքային ռեսուրսներով և չունի զարգացման հեռանկարներ, միևնույն ժամանակ հիմնավորվել է որ առաջիկա տարիներին ՀՀ տնտեսական աճի գործոնների շարքում հանքագործական արդյունաբերությունը շարունակելու է ունենալ կարևոր դերակատարում:

2. Բացահայտվել է, որ հանքագործական արդյունաբերության զարգացման տեմպերը, արտահանման ու ներմուծման ծավալները կախվածության մեջ չեն գտնվել հանրապետության «տնտեսական շրջափակման», ինչպես նաև COVID-19-ով պայմանավորված սահմանափակումներից:

3. Հաշվարկվել է ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում մետաղական օգտակար հանածոների օգտագործման ռոյալթիների իրական մեծությունը, ինչի արդյունքում պարզվել է, որ ընդերքի սեփականատերը՝ Հայաստանի Հանրապետությունը ստանում է դրա փոքր մասը:

4. Բացահայտվել են հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռեսուրսի ձևավորման և հարկազանձման բարելավման հնարավոր ուղիները և ներկայացվել են հանքային ռեսուրսի կառավարման կատարելագործման ուղղությունները, ինչն իր հերթին կունենա տնտեսա-էկոլոգիական դրական ազդեցություն:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսության առաջին՝ «Հանքարդյունաբերության (հանքագործական արդյունաբերության) տնտեսա–էկոլոգիական հիմնահարցերը և զարգացման ժամանակակից միտումները» գլխում ուսումնասիրվել են հանքային ռեսուրսի սահմանման և գնահատման մեթոդաբանությունը և դրա հիման վրա ստացվել են ՀՀ ՀՆԱ-ի և հանքային ռեսուրսի ցուցանիշների հավելաճերի հիման վրա հաշվարկվող համեմատական արդյունավետության գործակիցները, ինչպես նաև հանքային ռեսուրսի և հարկեր/ՀՆԱ-ի ցուցանիշների հավելաճերի համեմատական արդյունավետության գործակիցները 1995-2018թթ. ժամանակահատվածի համար: Ցանկալի կլիներ, որ նշված գործակիցները հաշվարկվեին նաև 2019-2020 թթ համար, հաշվի առնելով նաև COVID 19- ով պայմանավորված գործոնների ազդեցությունը:
2. Հաշվարկվել է ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում մետաղական օգտակար հանածոների օգտագործման ռոյալթիների իրական մեծությունը, ինչի արդյունքում պարզվել է, որ ընդերքի սեփականատերը՝ Հայաստանի Հանրապետությունը ստանում է դրա փոքր մասը: Ցանկալի կլիներ, որ հեղինակը ավելի մանրամասն ներկայացներ ստացված արդյունքները՝ քանակական գնահատականներով:

3. Ատենախոսությունը վերնագրված է «Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության զարգացման տնտեսա–էկոլոգիական հիմնախնդիրները»: Ցանկալի կլիներ, որ հեղինակը առավել մանրամասն անդրադարձ կատարեր ՀՀ-ում հանքագործական արդյունաբերության էկոլոգիական ազդեցություններին և առավել թիրախավորված վերլուծություն ներկայացներ հանքագործական արդյունաբերությամբ և բացահանքերի շահագործմամբ զբաղվող ձեռնարկությունների, որպես վնասակար նյութերի արտանետման խոշոր աղբյուրներ, առաջացրած ռիսկերի, երկարաժամկետ և կարճաժամկետ կտրվածքով հասարակության բարեկեցության առումով դրանց ազդեցությունների հետ կապված:

Եզրակացություն

Մեր կողմից նշված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: **Զավեն Շմավոնի Մկրտչյանի** ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որում դրված և լուծված են Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության հումքային բազայի օգտագործման և տնտեսա–էկոլոգիական գործոնքակազմի ուսումնասիրության, մետաղական հանքավայրերի ընդերքօգտագործման հիմնախնդիրների բացահայտման, գնահատման և ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիներ առաջադրման խնդիրներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, **Զավեն Շմավոնի Մկրտչյանի** «Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության զարգացման տնտեսա–էկոլոգիական հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է

Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 *«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»* մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Դոցենտ Ս. Սարգսյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար, պ.գ.թ., Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

28.06.2021